ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՀՀ-ՈՒՄ, ՄԱՍՆԱՎՈՐԱՊԵՍ՝ «ՍԱՀՄԱՆԱԶԱՏՎԱԾ» ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՈՒՄ *

ՀՏԴ 331.5 *DOI: 10.52063/25792652-2025.1.24-232*

ՏԻԳՐԱՆ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի
տնտեսագիտական ֆակուլտետի
միջազգային տնտեսական հարաբերությունների
ամբիոնի դասախոս, տնտեսագիտության թեկնածու,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
tmikayelyan.rm@gmail.com
ORCID: 0000-0001-9265-2783

«Գալուստ Գյուլբենկյան» հիմնադրամի կողմից ֆինանսավորվող հայագիտության վերաբերյալ կարճաժամկետ դրամաշնորհային ծրագրի շրջանակներում իրականացվել է «սահմանազատված» Տավուշի մարզի միգրացիոն հիմնախնդիրների ուսումնասիրություն:

Հետազոտության հիմնական նպատակն է գնահատել և վերլուծել Տավուշի մարզի միգրացիոն հակվածությունը՝ պայմանավորված 2024 թվականի ապրիլի 19-ին Ադրբեջանի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության միջև պետական սահմանի սահմանազատման պետական հանձնաժողովի ութերորդ հանդիպման արդյունքներով: Այս համատեքստում, համեմատական, պատմական շարքերի վերլուծության, համադրական, վերլուծության մեթոդների միջոցով ներկայացվել են վերջին տարիների ընթացքում Տավուշի միգրացիոն գործընթացները:

Հետազոտության շրջանակներում սահմանազատման ազդեցությունն ու միգրացիայի դիմելու պարագայում մարդկանց հնարավոր խնդիրները բացահայտելու նպատակով նախապես մշակված հարցաթերթերով իրականացվել են առցանց և անցանց հարցումներ՝ Տավուշի մարզի տարբեր բնակավայրերի բնակիչների շրջանում: Իրականացված հարցումների արդյունքում պարզվել է, որ Տավուշի բարեկեցիկ ապագայի համար բնակիչների 85%-ը առաջնահերթություն է համարում անվտանգության ապահովումը, ինչը կապված է նաև Ադրբեջանի հետ սահմանազատման գործընթացներով: Մինչդեռ հարցվածների 51%-ը կարևորում է նոր աշխատատեղերի ստեղծումը: Տավուշում գործազրկության մակարդակը 2023 թվականին կազմել է 23.3%:

Հիմնաբառեր՝ *միգրացիա, միգրացիոն հակվածություն, Հայաստան, Տավուշի մարզ, մշտական բնակչություն, սահմանազատում, անվտանգություն:*

Ներածություն

Վերջին տարիներին միգրացիան դարձել է զինված հակամարտությունների, կլիմայի փոփոխության, տնտեսական անհավասարության և, ինչու չէ նաև, քաղաքական անկայունության հետևանքով առաջացած առավել սուր ու գլոբալ

* Հոդվածը ներկայացվել է 15.02.2025թ., գրախոսվել՝ 03.03.2025թ., տպագրության ընդունվել՝ 30.04.2025թ.:

երևույթներից մեկը: Միլիոնավոր մարդիկ անցնում են սահմաններ՝ փնտրելով ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ, ինչպես նաև առավել հասանելի հնարավորություններ կամ բարելավված կենսապայմաններ: Միևնույն ժամանակ, տնտեսական միգրացիան շարունակում է պահպանել գերիշխող աճի միտումներ, քանի որ մարդիկ զարգացող երկրներից տեղափոխվում են զարգացած երկրներ՝ կայուն աշխատանքի և կրթություն ստանալու փնտրտուքով պայմանավորված, իսկ բնակչության միգրացիան ներառում է նաև աշխատուժի միգրացիան՝ տարբեր երկրներում աշխատանք փնտրելու, սեփական կենսական հնարավորություններն իրացնելու և պայմանները բարելավելու նպատակով (Մարկոսյան 151):

Համաձայն ՄԱԿ-ի “International Migrant Stock 2024”-ի տվյալների, համաշխարհային միգրանտների թիվը 2024 թվականին կազմել է 304 մլն. մարդ, ինչը նախորդ՝ 2020 թվականի զեկույցի համեմատ աճել է 10.4%-ով (ՄԱԿ, 2024): Այս համատեքստում կարող ենք արձանագրել, որ 2024 թվականի դրությամբ աշխարհի բնակչության 3.8%-ը միգրանտ է, ինչը մեր օրերում հիմնականում պայմանավարված է ինչպես տնտեսական պատճառներով, այնպես էլ այնպիսի զինված հակամարտություններով, ինչպիսիք են Ռուսաստան-Ուկրաինա հակամարտությունը, Մերձավոր Արևելքում՝ Սիրիա, Եմեն, Իսրայել-Պաղեստին, Աֆրիկայում՝ Սուդան, Սահելյան գոտի և Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետություն, և իհարկե Հարավային Կովկասում Հայաստանի և Ադրբեջանի միջև սահմանային հարցերի հետ կապված լարվածությունները:

Հայաստանի Հանրապետությունում միգրացիոն հիմնախնդիրը միշտ եղել է կարևորագույն հարցերից մեկը, քանի որ Հայաստանը միշտ էլ եղել է համաշխարհային միգրացիոն գործընթացների մասնակից՝ պայմանավորված փոխկապակցված այնպիսի գործոններով, ինչպիսիք են ղարաբաղյան հակամարտությունը, երկրաշարժը, քաղաքական, սոցիալական և տնտեսական հեղափոխական անցումները:

Այս հետազոտության շրջանակում հիմնական շեշտադրումը դրվել է 2023 թվականի սեպտեմբերի 19-ին Ադրբեջանի կողմից Արցախի նկատմամբ սանձազերծված վերջին պատերազմով, Արցախի ամբողջական հայաթափմամբ և դրան հաջորդած՝ Տավուշի մարզի որոշ շրջանների սահմանազատման գործընթացներով պայմանավորված՝ ՀՀ և մասնավորապես Տավուշի մարզի բնակչության միգրացիոն խնդիրների վերհանման վրա:

Համաձայն ՀՀ ազգային վիճակագրական կոմիտեի տվյալների՝ Հայաստանի մշտական բնակչության թվաքանակը 2016-2024 թվականներին գտնվել է 2.9 միլիոնի շրջանակում: Դիտարկվող ժամանակահատվածում մշտական բնակչության ամենաբարձր ցուցանիշը արձանագրվել է 2016 թվականին՝ կազմելով 2,999 հազար մարդ: Պետք է նշել, որ եթե 2024 թվականի ընդհանուր բնակչության ցուցանիշը մոտենում է 2016 թվականի ցուցանիշին, ապա գյուղական բնակչության շրջանակում նկատվում է մշտական բնակչության նվազման միտումներ (Գծապատկեր 1):

Հաշվի առնելով, որ մշտական բնակչության ցուցանիշը հիմնական տեղաշարժերը չի բնութագրում, ուսումնասիրվել է նաև ՀՀ բնակչության տեղաշարժերի վարչական գրանցումների մնացորդները[1] ըստ ՀՀ մարզերի և մայրաքաղաք Երևանի՝ 2019-2023 թվականների տվյալների (2024 թվականի ցուցանիշները առկա չէին):

[1] Հաշվառվածների և հաշվառումից հանվածների տարբերություն:

Գծապատկեր 1.

ՀՀ բնակչության թվաքանակը. քաղաքային և գյուղական բնակչություն (2016-2024թթ. հունվարի 1-ի դրությամբ, հազար մարդ)



Համաձայն աղյուսակ 1-ի (ՀՀ ԱՎԿ, 2022, 2024) տվյալների վերլուծության՝ 2019-2023 թվականներին վարչական գրանցումների մնացորդի կտրուկ աճ է արձանագրվել 2023 թվականին՝ պայմանավորված Արցախից բռնի տեղահանված հայրենակիցների հաշվառման վայրերի գրանցմամբ: Միայն քաղաքամայր Երևանում 2023 թվականին հաշվառվածների թիվը 2022 թվականի համեմատ աճել է 38.9%-ով: Արցախից բռնի տեղահանվածների հաշվառումներով պայմանավորված՝ 2023 թվականին բացասական մնացորդ չեն արձանագրվել ո՛չ Երևան քաղաքում, ո՛չ էլ մարզերում: Նշյալ եզրակացությունը նաև փաստվում է ՅՈՒՆԻՍԵՖ-ի կողմից հրապարակված 19-րդ զեկույցով, համաձայն որի Արցախից բռնի տեղահանված հայրենակիցների 40.3% կամ 46,512 մարդ հանգրվանել է մայրաքաղաք Երևանում, 16.1% կամ 18,622 մարդ՝ Կոտայքում, 10.4% կամ 11,986 մարդ՝Արարատում, 9.5% կամ 10,970 մարդ՝ Արմավիրում, 5.7% կամ 6,547 մարդ՝Սյունիքում, 3.7% կամ 4,229 մարդ՝ Լոռիում, 3.5% կամ 4,034 մարդ՝ Շիրակում, 3.3% կամ 3,854 մարդ՝ Արագածոտնում, 3.1% կամ 3,537 մարդ՝ Գեղարքունիքում, 2.6% կամ 2,962 մարդ՝ Տավուշում և 1.9% կամ 2,135 մարդ Վայոց Ձորում (ՅՈՒՆԻՍԵՖ, 2024): Համադրելով այս թվերը ՀՀ բնակչության տեղաշարժերի վարչական գրանցումների մնացորդների հետ՝ կարելի է պնդել որ մի շարք մարզերում մնացորդը բացասական է եղել նաև 2023 թվականին:

Վերոնշյալ փաստով պայմանավորված՝ վերլուծություն իրականացվել է մինչև 2023 թվականը հրապարակված տվյալներով:

Համաձայն աղյուսակի 1-ի՝ Տավուշի մարզի տեղաշարժերի վարչական գրանցումների մնացորդները 2020 թվականից սկսած եղել են բացասական: Ավելին, հաշվառումից հանվածների առավելագույն ցուցանիշներն արձանագրվել են 2020 և 2021 թվականներին՝ համապատասխանաբար կազմելով 1825 և 1925 մարդ:

Աղյուսակ 1.

ՀՀ բնակչության տեղաշարժերի վարչական գրանցումների մնացորդները

ըստ ՀՀ մարզերի և ք. Երևանի (2019-2023թթ՝ մարդ)

	2019	2020	2021	2022	2023
ՀՀ	7,640	3,374	4,062	7,026	41,438
Երևան	6,516	3,746	4,416	5,188	13,220
Արագածոտն	(502)	(63)	146	261	1,421
Արարատ	183	541	862	918	4,161
Արմավիր	350	665	1,047	828	3,644
Գեղարքունիք	**(881)**	**(490)**	**(477)**	**(170)**	**1,805**
Լոռի	(632)	(177)	(118)	(167)	2,056
Կոտայք	467	873	1,205	1,486	5,735
Շիրակ	**(795)**	**(83)**	**(415)**	**(461)**	**1,560**
Սյունիք	**1,511**	**(1,033)**	**(1,387)**	**(655)**	**4,623**
Վայոց ձոր	**71**	**(87)**	**(589)**	**(109)**	**1,312**
Տավուշ	**1,352**	**(518)**	**(628)**	**(93)**	**1,901**

Հատկանշական է, որ բացի Տավուշի մարզից, 2020 թվականից կայուն բացասական մնացորդներ արձանագրվել են նաև Արցախի հարևան Սյունիքի և Գեղարքունիքի մարզերում: Այսինքն՝ կարելի է եզրակացնել, որ պատերազմի հետևանքով պայմանավորված՝ մարդկանց մտավախություններն էլ ավելի են շատացել՝ ապագայի հետ կապված:

Տավուշի մարզի մշտական բնակչության հակիրճ նկարագիրը և հարցաթերթերով անցկացված հետազոտության արդյունքները

Տավուշի մարզի մշտական բնակչության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մարզի բնակչության թվաքանակը նվազման միտում է արձանագրել 2017 թվականից սկսած: Նախապատերազմյան շրջանում՝ 2019 թվականին, Տավուշի մարզի մշտական բնակչության թիվը կազմել է 122.5 հազար մարդ, իսկ 2024 թվականին հունվարի 1-ին՝ 2019 թվականի համեմատ նվազել է 4%-ով և կազմել 116.5 հազար մարդ:

Հաշվի առնելով, որ հետազոտության հիմնական նպատակը Տավուշի մարզի բնակչության միգրացիոն հակվածության ուսումնասիրությունն է՝ պայմանավորված 2024 թվականի ապրիլի 19-ին Ադրբեջանի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության միջև պետական սահմանի սահմանազատման պետական հանձնաժողովի ութերորդ հանդիպման արդյունքներով (ՀՀ ԱԳՆ, 2024), իսկ Տավուշի մարզի բնակչության տեղաշարժերի վարչական գրանցումների վերաբերյալ 2024 թվականի դրությամբ տեղեկատվություն առկա չէ, նախապես մշակված հարցաթերթերով առցանց և անցանց եղանակներով իրականացվել են հարցումներ՝ Տավուշի մարզի տարբեր բնակավայրերի բնակիչների շրջանում:

Ընդհանուր առմամբ, հետազոտությանը մասնակցել են 3840 մարդ՝ 65%-ը կամ 2496 մարդ իգական սեռի ներկայացուցիչ, իսկ 35%-ը կամ 1344 մարդ՝ արական:

Ըստ ընտանիքի անդամների թվի՝ հարցվածների 69% ունեին չորսից յոթ հոգանոց ընտանիքներ, 24%-ը՝ մեկից երեք, իսկ մնացած 7%-ը՝ ութ և ավել:

Գծապատկեր 2.

Հարցվածների աշխատանքով ապահովվածությունը %



Համաձայն գծապատկեր 2-ի՝ կարելի է արձանագրել, որ հարցման մասնակիցների 57%-ը կամ 2189 մարդ ունի հիմնական աշխատանք: Մնացած 43%-ն ապահովված չէ հիմնական աշխատանքով:

Հետազոտության շրջանակում ընտրվել են որոշ հարցեր՝ հասկանալու համար Տավուշի մարզում ապրող մեր հայրենակիցների մտադրությունները և մտահոգությունները՝ կապված ապագայի հետ: Խնդիրը առավել խորքային ընկալելու համար հարցվողների շրջանում փորձ է արվել պարզելու, թե ինչ պայմաններ են անհրաժեշտ, կամ ինչ ոլորտներ ունեն բարեկարգման կարիք՝ Տավուշում ապրելու համար՝ հնարավորություն ընձեռելով ընտրել մի քանի տարբերակ: Արդյունքները ներկայացված են գծապատկեր 3-ում:

Հարցման մասնակիցների 85%-ը, որպես հիմնական պայման մարզում բնակվելու համար, նշել է անվտանգությունը: Պետք է նշել, որ, համաձայն հարցման արդյունքների, հիմնականում անվտանգության հետ կապված մտավախությունները բնակչության մոտ բազմապատկվել են Բաղանիս, Ոսկեպար, Կիրանց ու Բերքաբեր համայնքներում իրականացված սահմանազատումների հետևանքով:

Միևնույն ժամանակ, հարցվածների 51%-ը նաև կարևորել է աշխատանքով ապահովվածությունը: Շատ կարևոր է այս համատեքստում պետության գործուն քայլերի իրականացումը՝ հաշվի առնելով տնտեսական միգրացիայի կայծակնային աճի տեմպերը ողջ աշխարհում: Համաձայան ՀՀ ԱՎԿ տվյալների բանկի գործազրկության մակարդակի ցուցանիշների՝ 2019-2023 թվականներին Տավուշի մարզի գործազրկության մակարդակը միջինում կազմել է 22%, իսկ 2023 թվականին 23.3%՝ 2.6 տոկոսային կետով ավելի բարձր 2022 թվականի ցուցանիշից (ՀՀ ԱՎԿ տվյալների բանկ):

Հարցվածները իրենց պատասխաններում նաև շատ կարևորել են դպրոցական և նախադպրոցական ոլորտի բարելավումը, այս խնդիրը համատարած բնույթ է կրում ոչ միայն Տավուշի մարզում, այլև նաև ՀՀ մնացած մարզերում: Նշենք, որ, որպես մարզում ապրելու նախապայման, այս ոլորտին կարևորություն է տվել հարցվածների 30%-ը: Հաշվի առնելով բնակիչների՝ այս հարցի վերաբերյալ այսքան մեծ հնչեղությունը՝ ուսումնասիրվել է Տավուշի մարզի դպրոցների շենքային պայմանների պաշտոնական վիճակագրությունը:

Գծապատկեր 3.

Հարցվողների կողմից առանձնացված հիմնական պայմանները Տավուշի մարզում ապրելու համար



Այսպիսով՝ ըստ ՀՀ ԱՎԿ տվյալների բանկի հանրակրթական հաստատությունների ցուցանիշների՝ 2023 թվականի դրությամբ Տավուշի մարզի 82 դպրոցներից 23-ը ենթակա է հիմնանորոգման,, իսկ 22-ը՝ ընթացիկ նորոգման (ՀՀ ԱՎԿ տվյալների բանկ): Այսինքն՝ կարելի է արձանագրել, որ մարզի դպրոցների 55%-ը ենթակա է հիմնանորոգման կամ ընթացիկ նորոգման:

Գծապատկեր 4.

«Տավուշը լքելու պարագայում որտե՞ղ եք պատկերացնում Ձեր ապագան» հարցի պատասխանի վերլուծությունը



Հետազոտության մասնակիցները նաև պատասխանել են այն հարցին, թե որքանով են անվտանգ զգում Տավուշում: Հարցման մասնակիցների 25%-ը նշել է, որ բացարձակ անվտանգ չի զգում Տավուշում, իսկ 40%-ը նշել է, որ ունի միջին և ցածր անվտանգության ապահովվածության զգացում:

Պետք է նաև նշել, որ հարցման մասնակիցների 35%-ը պատասխանել են, որ բացարձակ անվտանգ են զգում՝ ապրելով Տավուշի մարզում: Անկախ հարցի վերլուծության արդյունքում ունեցած պատկերի՝ Տավուշում ապրողների մեծամասնությունը չեն պատրաստվում լքել մարզը (գծապատկեր 4):

«Տավուշը լքելու պարագայում որտե՞ղ եք պատկերացնում Ձեր ապագան» հարցին պատասխանելով հարցվածների 71%-ը նշել է, որ չի լքելու Տավուշը, մինչդեռ, 12%-ը իր ապագան պատկերացնում է ՀՀ այլ մարզում կամ մայրաքաղաք Երևանում, 9%-ը՝ Ռուսաստանում, 7%-ը՝ եվրոպական երկրներում և 4%-ը՝ Ամերիկայի Միացյալ Նահանգներում: Այսինքն՝ հարցվածների 29%-ն ունի միգրացիոն հակվածություն:

Եզրակացություն

Տավուշի մարզի միգրացիոն խնդիրների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ բնակչության միգրացիոն հակվածության հիմնական ազդակները պայմանավորված են ինչպես անվտանգային հարցերով, այնպես էլ սոցիալ-տնտեսական մարտահրավերներով:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ Տավուշի մարզի տեղաշարժերի վարչական գրանցումների մնացորդները, 2020 թվականից սկսած, եղել են բացասական: Ավելին՝ հաշվառումից հանվածների առավելագույն ցուցանիշները արձանագրվել են 2020 և 2021 թվականներին՝ համապատասխանաբար կազմելով 1825 և 1925 մարդ: Մարզի տեղաշարժերի վարչական գրանցումների մնացորդը եղել է դրական 2023 թվականին՝ կազմելով 1901 մարդ, մինչդեռ Արցախից բռնի տեղահանված մեր հայրենակիցներից 2135 մարդ հանգրվանել է Տավուշի մարզում: Այսինքն՝ այլ հավասար պայմաններում չի բացառվում, որ ցուցանիշը 2023 թվականին նույնպես եղել է բացասական:

Իրականացված հարցումների արդյունքում պարզվել է, որ Տավուշի հետագա բարեկեցիկ ապագայի համար բնակիչների **85%-ը առաջնահերթություն է տալիս անվտանգության ապահովմանը,** ինչը կապված է նաև Ադրբեջանի հետ սահմանազատման գործընթացներով: Մինչդեռ հարցվածների 51%-ը կարևորում է նոր աշխատատեղերի ստեղծումը: Տավուշում գործազրկության մակարդակը 2023 թվականին կազմել է 23.3%, ինչը 2.6 տոկոսային կետով բարձր է նախորդ տարվա համեմատ:

Բացի այդ, կրթական համակարգի խնդիրները ևս կարող են դառնալ միգրացիայի դիմելու պատճառ. մարզի դպրոցների 55%-ը ենթակա է հիմնանորոգման կամ ընթացիկ նորոգման, ինչը կարող է միգրացիայի պատճառ դառնալ հատկապես երիտասարդ ընտանիքների համար: Հետազոտությունները ցույց են տալիս, որ երիտասարդ բնակչության զգալի մասը հեռանում է մարզից՝ կրթություն ստանալու և ավելի լավ աշխատանքային հեռանկարներ գտնելու նպատակով: Այս գործընթացը հանգեցնում է նաև ժողովրդագրական խնդիրների՝ երիտասարդ ու աշխատունակ բնակչության կորստով:

Չնայած այս մարտահրավերներին՝ հարցման մասնակիցների 71%-ը նշել է, որ չի պատրաստվում լքել Տավուշը, ինչը վկայում է բնակչության՝ հայրենի բնակավայրի նկատմամբ ունեցած մեծ կապվածության մասին, մինչդեռ, հարցվածների 29%-ը ունի միգրացիոն հակվածություն. մեծամասնությունը նախընտրում է տեղափոխվել ՀՀ այլ մարզեր կամ Երևան:

Այսպիսով՝ Հայաստանի միգրացիոն քաղաքականության մշակման պատասխանատուները պետք է առավելագույնս կարևորեն վեր հանված հարցերը՝ մարզերում հնարավոր միգրացիոն հոսքերը կարգավորելու համար, քանի որ միգրացիոն գործընթացների դիտարկվող տեմպերը իրական մարտահրավեր են դարձել և կարող են հանգեցնել լուրջ ժողովրդագրական ճգնաժամի: ՀՀ պետական քաղաքականության առաջնահերթ ուղղություններից պետք է լինի Տավուշի մարզի անվտանգության բարձրացումը, տնտեսական զարգացման խթանումը, ինչպես նաև ենթակառուցվածքների բարելավումը, ինչը կնվազեցնի բնակչության պարտադրված միգրացիայի դիմելու դրդապատճառները և կխթանի տարածաշրջանի կայուն զարգացումը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ

1. ՀՀ ԱԳՆ. *Մամուլի հաղորդագրություն Հայաստանի և Ադրբեջանի միջև պետական սահմանի սահմանազատման հարցերով պետական հանձնաժողովների ութերորդ հանդիպման արդյունքների վերաբերյալ*. https://www.mfa.am/hy/press-releases/2024/04/19/8th_meeting/12606:
2. ՀՀ ԱՎԿ. *Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով*. 2024՝ https://armstat.am/am/?nid=81&id=2696:
3. ՀՀ ԱՎԿ. *Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով. 2022*՝ https://armstat.am/am/?nid=81&id=2526:
4. ՀՀ ԱՎԿ. *տվյալների բանկ, Գործազրկության մակարդակն ըստ ցուցանիշների և տարիների*. https://statbank.armstat.am/pxweb/hy/ArmStatBank/ArmStatBank__2%20Population%20and%20social%20processes__23%20Employment%20and%20unemployment/PS-eu-1-2023.px/?rxid=9ba7b0d1-2ff8-40fa-a309-fae01ea885bb:
5. ՀՀ ԱՎԿ տվյալների բանկ. *Շենքային պայմանները, համակարգիչների և ինտերնետային ցանցին միացված դպրոցների քանակն ըստ ցուցանիշների, մարզերի և տարիների*. https://statbank.armstat.am/pxweb/hy/ArmStatBank/ArmStatBank__2%20Population%20and%20social%20processes__22%20Education__222%20General%20education%20institutions/ps-ed-gei03.px/?rxid=9ba7b0d1-2ff8-40fa-a309-fae01ea885bb:
6. Մարկոսյան, Աշոտ, Նազարյան, Գրիգոր, Հախվերդյան, Դավիթ. *Միջազգային տնտեսական հարաբերություններ// ուսումնական ձեռնարկ*. 2 մասով, մաս II, Երևան, 2012, 640 էջ, էջ 151:
7. UNICEF. *Armenia: Humanitarian situation Report*. N 19, p. 3.
8. United Nations. *Trends in International Migrant Stock*. 2024, https://www.un.org/development/desa/pd/content/international-migrant-stock:

WORKS CITED

1. HH AGN, *Mamuli haghordagrut'yun Hayastani & Adrbejani mijev petakan sahmani sahmanazatman harcerov petakan hand'najhoghovneri ut'erord handipman ardyunqneri veraberyal*՝ [*Press Release on the Results of the Eighth Meeting of the State Commissions on the State Border between Armenia and Azerbaijan*], https://www.mfa.am/hy/press-releases/2024/04/19/8th_meeting/12606 , (In Armenian)
2. HH AVK, *Hayastani Hanrapetut'yan marzery' ev Erevan qaghaqy' t'verov, 2024*՝ [NSC RA, *Regions of the Republic of Armenia and the city of Yerevan in Numbers, 2024*], https://armstat.am/am/?nid=81&id=2696 , (In Armenian)
3. HH AVK, *Hayastani Hanrapetut'yan marzery' ev Erevan qaghaqy' t'verov, 2022*՝ [NSC RA, *Regions of the Republic of Armenia and the city of Yerevan in Numbers, 2022*], https://armstat.am/am/?nid=81&id=2526 , (In Armenian)
4. HH AVK, *tvyalneri bank, Gorc'azrkut'yan makardakn y'st cucanishneri ev tarineri*: [NSS RA, *Data Bank, Unemployment Rate by Indicators and Years.*], (In Armenian)
5. HH AVK, *tvyalneri bank, Shenqayin paymannery', hamakargichneri ev internetayin cancin miacvac' dprocneri qanakn y'st cucanishneri, marzeri ev tarineri* [NSS RA, *Data Bank, Buildiconditions, the Number of Computers and Schools Connected to the Internet by Indicators, Regions and Years*], (In Armenian)
6. Markosyan Ashot, Nazaryan Grigor, Haxverdyan Davit', *Mijazgayin tntesakan haraberut'yunner// usumnakan d'er'nark, 2 masov,, mas II, Erevan, 2012, 640 e'j, e'j 151* [*International Economic Relations// textbook, in 2 parts, part II, Yerevan, 2012, 640 pages, page 151*], (In Armenian)

THE PROBLEM OF MIGRATION IN ARMENIA, IN PARTICULAR IN THE «DEMARCATED» TAVUSH REGION

TIGRAN MIKAYELYAN
Armenian State University of Economics, Faculty of economics,
Chair of international economic relations, Lecturer,
Ph.D. in Economics,
Yerevan, the Republic of Armenia

Within the framework of a short-term grant program in Armenian studies funded by the Calouste Gulbenkian Foundation, a study of migration problems in the "demarcated" Tavush region was carried out. The main purpose of the article is to assess and analyze the migration trend in the Tavush region, due to the results of the eighth meeting of the State Commission for the Delimitation of the State Border between the Republic of Azerbaijan and the Republic of Armenia on April 19, 2024. In this context, the migration processes of Tavush in recent years have been presented through the methods of comparative, historical series analysis, and comparative analysis.

Within the research, online and offline surveys were conducted among residents of various settlements in Tavush region using pre-developed questionnaires to identify the impact of border closure and possible problems people may face when applying for migration.

As a result of the conducted surveys, it turned out that 85% of residents give priority to ensuring security for the further prosperous future of Tavush, which is also related to the demarcation of the border with Azerbaijan. Meanwhile, 51% of respondents attach great importance to the creation of new jobs. The unemployment rate in Tavush in 2023 was 23.3%

Keywords: *migration, propensity to migrate, population, Armenia, Tavush region, demarcation, security.*

ПРОБЛЕМА МИГРАЦИИ В АРМЕНИИ В КОНТЕКСТЕ СИТУАЦИИ В «ДЕМАРКИРОВАННОЙ» ТАВУШСКОЙ ОБЛАСТИ

ТИГРАН МИКАЕЛЯН
преподаватель кафедры международных экономических
отношений экономического факультета
Армянского государственного экономического
университета, кандидат экономических наук,
г. Ереван, Республика Армения

В рамках краткосрочной грантовой программы по арменоведению, финансируемой Фондом Галуста Гюльбенкяна, было проведено исследование миграционных проблем в «демаркированной» Тавушской области. Основная цель статьи-оценить и проанализировать склонность к миграции в Тавушской области, обусловленные результатами восьмого заседания Государственной комиссии по

делимитации государственной границы между Азербайджанской Республикой и Республикой Армения 19 апреля 2024 года. В этом контексте с помощью сравнительного анализа, анализа исторических рядов и сопоставительного анализа были представлены миграционные процессы в Тавуше за последние годы.

В рамках исследования, с целью выявления влияния делимитации границы и возможных проблем у людей в случае обращения к миграции, с помощью заранее разработанных анкет были проведены онлайн-и офлайн-опросы среди жителей различных населенных пунктов Тавушской области.

В результате проведенных опросов выяснилось, что для благополучного будущего Тавуша 85% жителей отдают приоритет обеспечению безопасности, что также связано с процессами демаркации границы с Азербайджаном. Между тем, 51% респондентов придают большое значение созданию новых рабочих мест. Уровень безработицы в Тавуше в 2023 году составил 23.3%.

Ключевые слова: *миграция, склонность к миграции, Армения, Тавушская область, постоянное население, демаркация, безопасность.*